

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հուլիսի 8-ի ՀՕ-176-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք)

1. 2-րդ հոդվածի «վերջնակետային սարքավորում» պարբերությունից հետո լրացնել նոր պարբերություն հետևյալ բովանդակությամբ.

«**տեխնիկական վերահսկողություն՝** սույն օրենքով նախատեսված դեպքերում իրավասու մարմնի կողմից իրականացվող գործընթաց, որն ուղղված է տեխնիկական սարքավորումներով ճառագայթվող աղբյուրների տեխնիկական կանոնակարգի նորմերի պահանջների խախտումների հայտնաբերման և դրանց վերացմանը»:

2. 4-րդ հոդվածի 1-ին մասի 4)-րդ կետը լրացնել նոր նախադասությամբ հետևյալ բովանդակությամբ.

«Արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

3. 4-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետից հանել «համապատասխան թույլտվության առկայության դեպքում» բառերը, իսկ «օգտագործումը» բառից հետո լրացնել «ինչպես նաև իրականացնել ռադիոհաղորդակցության սարքավորումների տեխնիկական վերահսկողություն: Տեխնիկական վերահսկողության իրականացման կարգը սահմանվում է ՀՀ օրենքով, իսկ ստուգումները իրականացվում են «ՀՀ ստուգումների կազակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքին համապատասխան» բառերով:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել նոր 4-րդ) կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«4) արտակարգ իրավիճակների առաջացման (առաջացման սպառնալիքի) դեպքում ստեղծված իրավիճակին համարժեք արձագանքում կազմակերպելու, տուժածներին (օգնություն հայցողներին) անհապաղ օգնություն ցուցաբերելու կապակցությամբ:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:



Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Մ

«ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը հիմնականում կարգավորվում է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» ՀՀ օրենքով, գերատեսչական և այլ իրավական ակտերով: Գործող իրավական ակտերում նախատեսված չեն ռադիոհաղորդակցության սարքավորումների օգտագործման վերահսկման կարգը, որի բացակայության հետևանքով հնարավորություն չի ընձեռվում լիարժեք բացառելու վնասակար ազդեցությունները և ճառագայթումները, ինչպես նաև տեխնիկական և տեղեկատվական անվտանգության ապահովման խնդիրները:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

Նախագծով ՀՀ կառավարությանը իրավասություն է վերապահվում արտակարգ իրավիճակների, արտակարգ և (կամ) ռազմական դրության ժամանակ էլեկտրոնային հաղորդակցության ցանցերի շահագործման և կառավարման ընթացակարգը սահմանելու համար, ինչպես նաև իրավասու մարմինն վերապահվում է տեխնիկական վերահսկողություն իրականացնելու իրավասությունը, որը թույլ կտա բացահայտել և բացառել շահագործվող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պահանջներին չհամապատասխանող ռադիոհեռարձակման սարքավորումները և կապահովի պետության անվտանգության համակարգերի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության, նավիգացիայի և երկաթուղու համակարգերում ռադիոէլեկտրոնային միջոցների անխափան աշխատանքը:

2. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները, անձինք և նրանց դիրքորոշումը

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման վարչության կողմից:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունումը հնարավորություն կընձեռվի լիառժեք ապահովել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ կետով նախատեսված իրավասությունների իրականացումը:



Ց Ա Ն Կ

Իրավական ակտերի, որոնց հիման վրա կամ որոնցից օգտվելով մշակվել է «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը ընդունելու կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացման կամ նվազեցման մասին

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում, ինչպես նաև լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն չի առաջացնում:



Ց Ա Ն Կ

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հեղինակների

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը մշակվել է Հայաստանի
Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների
նախարարության աշխատակազմի կապի և տեղեկատվայնացման վարչության կողմից:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության մասին

«Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի ընդունումը այլ իրավական ակտերում
փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնում:

